

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի : Երեմ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. ԿԶ 13
Քու. Աստուածդ պիմանա-
րելու պատրաստուէ, ո՛վ իս-
րայէլ. Ամովս. Գ. 12

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ես եմ ճամբան ու ճշմար-
տութիւնը եւ կեանքը. Յովհ. ԺԳ. 6
Որդին Մարդոյ եկաւ որ-
պէս զի կորսուածը փնտռէ
ու փրկէ. Դուկ. ԺԺ. 10
Ես եկայ որ կեանք ունե-
նան, եւ ալ աւելի ունենան:
Յովհ. Ժ. 10

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան.—Յրանսա եւ Սուրիա 5 Ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիւ ուրիշ երկիրներ 1,50 Շիլ

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 6

Բ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1926

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Զ Ո Հ

Արդ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստու-
ծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմին-
ները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ,
Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր
սլաշտօնը: Հռովմ. ԺԲ. 1

Որքա՛ն դիւրին է կարգաւ այս համարը.
քանի՛ քանի անգամներ կարգացած ենք, թե-
րեւս ուրիշներու ուշադրութիւնն ալ անոր վը-
րայ հրաւիրած ենք նամակաւ կամ բերանացի,
անձամբ անոր վրայ մտածեր ենք, անկէ ժա-
մանակ մը օգտուեր ենք, բայց ո՞րքան մնա-
ցած ենք այս համարին հոգիին մէջ. անիկա ո՞ր
աստիճան իրականութիւն եղած է մեր անձնա-
կան կեանքին մէջ:

Ահա այս է հարցը:

Մեզի հաւատացեալներուս համար, մանա-
ւանդ անոնց համար որ վարժ են խօսելու, շատ
դիւրին է այսպիսի համարներ մեղմէ աւելի տը-
կարներուն երեսն ի վար զարնել. սակայն եթէ
անկեղծօրէն քննած ենք ինքզինքնիս, տեսած
ենք թէ ճիշդ այդ խօսելու ժամանակ Աստու-
ծոյ յանդիմանական ազդարարութիւնը եկած
է մեզ, «սակայն դու դեռ այդ համարը ապրած
չես, անիկա քու փորձառութեանդ տակ ինկած
չէ, ի՞նչպէս կրնաս խօսիլ անոր մասին»: Ասոր
համար կ'արժէ որ մենք հաւատացեալներս յա-
ճախ մեր անձը, մեր սիրտն ու մարմինը Աս-
տուծոյ պայծառ լոյսին առջեւ փռենք իբր
կենդանի զոհ մը՝ քննութեան, անդամազննու-
թեան համար: Մեր խօսքերն ու քարոզները

յաճախ անպտուղ եղած են, որովհետեւ այդ
խօսքերուն ետեւ մեր հաւատքը, անձնական
կեանքը տկար գտնուած են:

Ասոր համար Առաքեալը ո'չ միայն Հռովմի
հաւատացեալներու ուշադրութեան կը յանձնէ
այս համարը, հապա սոյն եղբայրներէն կը խըն-
դրէ, կ'աղաչէ, որպէս զի իրենց մարմինները
ընծայեն կենդանի զոհ մը: Ինչո՞ւ, ի՞նչ պէտք
կայ որ առաքեալը եղբայրներուն գրէ այս խօս-
քը: Իբր հաւատացեալներ արդէն կենդանի զոհ
մը եղած էին: Այո՛, եւ սակայն այս կենդանի
զոհի ուխտը յաճախ կը մոռցուի, մինչդեռ հարկ
է ամէն վայրկեան ի միտ պահել, վասն զի Սա-
տանան միշտ պատրաստ է Աստուծոյ սերմերը
մեր սրտերուն մէջէն կտցահարել, ինչպէս որ
ըրին թոշուները ճամբուն վրայ ինկած ցորե-
նի սերմերը: Ասոր համար այս խօսքին ազդե-
ցութիւնը թարմ եւ պերճ է բոլոր հաւատաց-
եալներուն բոլոր ժամանակներու համար:

Հաւատացեալը բոլորովին նուիրուած է
Փրկչին. իր սիրտը, նոյնպէս իր մարմինը որոշ-
ուած է զոհի սեղանին համար, եւ պէտք է որ
հաւատացեալը զանոնք իրենց սրբութեանը մէջ
պահէ, զոհելով զանոնք ամէն օր Աստուծոյ սե-
ղանին վրայ, որ է իր բանաւոր պաշ-
տօնը: Հաւատացեալին պարտականութիւնն
է իր մարմինը նկատել, իբր Տէրոջը մէկ ստաց-
ուածքը, որ Ասոր մահուամբը գնուած, որոշ-
ուած է ըլլալ տաճար մը Սուրբ Հոգիին եւ բը-
նակարան մը Աստուածային Սուրբ Երրորդու-

թեան: Ձայս գործնականացնել պէտք է ձգտի հաւատացեալը: Հոգի մի հաւատացեալները իրենց հաւատքի կեանքին մէջ շատ բաներու տիրացած էին: Եկեղեցին շատ յաջողութիւններ կրնար թուել. անդամները Քրիստոսի վրայ մաքուր հաւատք մը ունէին եւ այդ հաւատքին մէջ աւելի կը յառաջդիմէին, ամէն օր գրքերը կը քննէին եւ Աստուծոյ բրած մեծ շնորհքին վրայ, խաչեալ Քրիստոսին վրայ ամէն օր նոր ուրախութեամբ կ'ուրախանային, անոր զոհողութիւնը աւելի իրականացնելով իրենց մտքին մէջ: Բայց իսկական քրիստոնէական յառաջդիմութիւնը կախեալ է միայն Աստուծոյ մեծ շնորհքը գիտնալէն, այլ նաեւ Անոր կամքը ճանչնալէն, ան որ բարի ու հաճելի եւ կատարեալ է:

Արդ կենդանի զոհ մը ըլլալու համար Աստուծոյ կամքը քննել ու ճանչնալ հարկ է:

Սատու Սուկատար Սինկհ կրնար իբր քրիստոնեայ մը իր հօրը տան մէջ մնալ եւ հոն շատերու օգտակար ըլլալ, սակայն քննեց ու գիտցաւ թէ Աստուծոյ կամքն էր բաժնուիլ հօրեական տունէն, ըլլալ աղքատ Սատու մը (թէ պէտ մեծահարուստ տան զաւակ) չունենալ ո'չ քսակ, ո'չ հաց, ո'չ գաւազան, այլ իր Փրկչին քայլերուն հետեւիլ տառ առ տառ, իբր կենդանի զոհ, Անոր: Հաւատացեալ, Տէրը կը կանչէ քեզ թերեւս Սատու մը ըլլալ թերեւս ոչ: Դու Սատուի կեանքը տեսնելով, զանիկա սիրելով անմիջապէս անոր հետեւելու չես, հապա Աստուծոյ կամքը քննելու ես քեզի համար: Քեզի համար Տէրոյը կամքը թերեւս ուրիշ է:

Դու կը տեսնես ուրիշը ազատ երկրացի, իր իրաւունքներուն տէր, երբ անոնք ոտնակոխուին, կը բողոքէ եւ վերջապէս կը լսուի. իսկ դուն չես լսուիր, վասն զի իրաւունք չունիս, վասն զի ո'չ մէկ երկրի քաղաքացի ես: Կը տեսնես ուրիշը որ հարուստ է, իր գրպանը լեցուն է միշտ ոսկիներով ու տղարներով, մինչդեռ դու թերեւս անկէ աւելի խելացի, չունիս նոյն միջոցները եւ այս պատճառաւ չունիս նոյն հաճոյքները, որ նա այդ դրամներով իրեն կարելի կ'ընէ: Դու կը տեսնես թէ Տէրը ուրիշին զաւակ զաւակի վրայ կը պարգեւէ, իսկ քու ամենասիրական զաւակդ քու ձեռքէդ կը խլէ, ու դու այս բոլոր պարագաներուն մէջ կը փորձուիս աշխարհի կեցւածքն ան քովը կ'երպարանելու:

Առաքեալը կ'աղաչէ արժանի եղածը մտածելէն աւելի բան չմտածել:

Ըլլալ կենդանի զոհ մը:

Ձոհը առանձին կ'երթայ ողջակէզի սեղանին ընդ առաջ: Իր զոհաբերութիւնը զոհար կուգայ իրեն եւ թերեւս իրաւացի. սակայն Տէրը անկէ մեծ օրհնութիւններ պիտի հանէ: Որքան աւելի զոհաբերութիւն այնքան աւելի օրհնութիւն: Որքան աւելի հնազանդութիւն այնքան աւելի ուրախութիւն:

Ահա գաղտնիքը զոհաբերութեան:

Քրիստոնէական կեանքը Քրիստոսի կեանքին շարունակութիւնն է եւ Անոր կեանքը զոհաբերութեան կեանքն էր: Քրիստոս առանձին էր իր զոհաբերութեան մեծ գործին մէջ, ա'խ, ի'նչ աղէխարշ կը հնչեն մեր ականջին Անոր խօսքերը. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ գիտ թողուցիր»: Անիկա առանձին կատարեց իր գործը եւ ինքն էր որ կրնար ըսել. «Ամէն բան կատարուեցաւ»: Քու զոհդ ուրիշին զոհին չնմանիր, դու առանձին կ'երթաս զէպի ողջակէզի սեղանը: Իսահակ առանձին պիտի զոհուէր, անիկա երբ որ իր երկրային հօրը բերնէն երկնային Հօրը կամքը ճանչցաւ, հնազանդեցաւ, առանց այդ մեծ զոհողութիւնը պահանջողէն պատճառներ հարցնելու:

Հաւատացեալ, կենդանի զոհ մը եղիր, նրուիրէ քու մարմինդ ամէն օր քու Տէրոյդ, լուսին քզինքդ մաքուր ջրով, այսինքն մաքրէ ինքզինքդ բոլոր աղտեղութենէ աստուածային խօսքին հնազանդելով: Թող ստորեւ պատմութիւնը—Անոր գաղտնիքը, զոր դու մտառութեամբ կարդալու ես, զքեզ աւելի լուսաբանէ Տէրոյը հնազանդելու պարտականութեանդ մէջ:

Մի' խորհիր նոյնիսկ թէ Տէրը ուրիշ հաւատացեալներէ նուազ զոհողութիւն կը պահանջէ քան որ քեզմէ. տես Հոգի մ. ԺԲ. 4-6: Քրիստոսի մահուամբը եւ անոր արիւնով քու սիրտդ մաքրուած է, ուստի ի'նչ որ Տէրը մաքրեց, դու պիղծ մի' սեպեր. Աստուծոյ տուր ինչ որ Աստուծոյնն է: Ինքզինքդ, ամենէն առաջ ինքզինքդ:

Ու այն ատեն զիւրին պիտի ըլլայ քեզի ապրիլ Հո. ԺԲ. 7-21ի կեանքը:

Եւ Տէրը քեզի հետ ըլլայ, քու ամենօրեայ զոհաբերութեանդ կեանքին մէջ:



«ԱՆՈՐ» ԳԱՂՏՆԻՔԸ

Այսօր ալ վեր. Հ.ի ուշադրութիւնը գրաւեց արն գունատ դեռատի օրիորդը որ եկեղեցիին մուտքին մօտ սիւնի մը տակ նստած էր: Միշտ նոյն տեղը կը նստէր: Նրբակազմ օրիորդ մը, գորշ ու նեղ հագուստով: Անոր դէմքը գունատ էր, իր խոշոր աչքերը կը նմանէին երկչոտ եղ-նիկի մը աչքերուն: Այնպէս կը թուէր թէ զրա-ցիներէն եւ ոչ մէկը զայն մօտէն կը ճանչնար: Վեր. Հ. հարցնելով իմացաւ թէ օրիորդը միայն քանի մը ամիս առաջ Hallenheim գիւղը փո-խադրուած էր: Եթէ դիւղացի կիւն մը եղած ըլ-լար, շատոնց այցելած պիտի ըլլար անոր, սա-կայն այն կանանչներով շրջապատուած յաւէտ դղեակի մը նմանող տանը՝ չէր համարձակեր մօտենալ:

Գիւղացի կիւներէն մին օր մը այսպէս ար-տայայտուած էր օրիորդին մասին. «Մարդ չհա-մարձակիր անոր մօտենալ, որովհետեւ մարդու հետ չխօսիր, միշտ լուռ կը մնայ եւ առանձին կ'ապրի ու ազնուականի մը երեւոյթը ունի, այ-սու ամենայնիւ մարդ կ'արգաստի իրեն վրայ, քանի որ անոր միակ ընկերը շուն մըն է ու իր աչքերուն արտայայտութիւնը փոքրիկ երկչոտ աղջկան մը տապաւորութիւնը կը թողու մեր վրայ»:

«Անշուշտ սոսկում պիտի պատճառէ իմ այ-ցելութիւնս անոր» խորհեցաւ երէցը, «բայց պի-տի համարձակիմ մօտենալ, որովհետեւ անոր դէմքին վրայ խոր տառապանքի մը գաղտնիքը կը շշմարեմ»: Այս մտածութեամբ մօտեցաւ ան պարտէզին մէջի տանը: Մեծ շունը՝ որուն հա-մար անըմբռնելի նորութիւն մըն էր այցելու մը տեսնել, սկսաւ ամբողջ ուժով պաշտպանել իր տիրուհին, մինչեւ որ անոր մեղմ ու տխուր ձայ-նը հասաւ իր ականջին:

Ալեգարդ ծերունի երէցը եւ դեռատի երկ-չոտ աչքերով օրիորդը դէմ առ դէմ կը գտնուէ-ին: Նէ այնքան ալ երկչոտ չէր երեւէր, ալ վըս-տահութեամբ կը մօտենար երէցին: Կան մար-դիկ որ տիրացած են սրտեր բանալու տեսակ մը բանալիի, թաքուն գորութեան մը, որուն իրենք անգամ զիտակից չեն: Ծերունի երէցը, որ ինք ալ անհամարձակ խառնուածքի տէր անհատ մըն էր, վախցած էր քիչ մը թէ ինչպէս խօսակցու-թեան պիտի սկսէր: Եւ ահա դեռատի օրիորդը այնքան անվերապահօրէն կ'արտայայտուէր ա-նոր առջեւ որպէս թէ ան իր ծերունի հայրն ըլ-լար: Կ'երեւի երէցը յարմար պարագային հա-սած էր հոն՝ որ ատեն աղջկան ներքին տապա-

պը սիրտը պայթեցնելու աստիճանին սաստկա-ցած էր:

«Պէտք է բացարձակ ըսեմ Ձեզի, պատուե-լի, թէ յուսահատութեան շատ մօտ կը գտնուէի», ըսաւ ան: «Կը տեսնէք թէ ծովը շատ մօտ է, ու երբոր ալիքներուն ձայնը ականջիս կը հասնի, ինծի արնայէս կը թռի թէ դիս կը կանչէ: Սա-կայն քանի անգամներ որ փորձեցի ծովեզերք երթալ, այն թաքուն տեղը, ուր ժայռ մը ցցուած է ջուրին եզերքը, շունս ելաւ եւ ինծի հետ եկաւ ու հոն հասնելուս տխուր տխուր ինծի նախեցաւ: Արդեօք Աստուած շուներու միջոցով ալ կը խօ-սի մարդուն»:

«Աստուած այնքան գաղտնի կերպեր ունի մարդիկ հոգալու որ մենք չենք հասկնար», ըսաւ ծերունի երէցը: «Տեսէք», շարունակեց օրիորդը, «եթէ կայ մէկը որուն ներքի է իր կեանքին վերջ դնել, այն ալ ես եմ: Բոլորովին մինակ մնացած եմ եւ մեր ընտանիքին անհատները հատիկ, հատիկ խլուած են ժառանգական հի-ւանդութենէ մը - խելագարութենէն: Ես կ'զգամ իմ մէջս այս հիւանդութեան բոլոր նշանները ու մեր ընտանիքին մէջ այս հիւանդութիւնը սոս-կալի երեւոյթ մը կ'առնէ: Օր մը կուգայ որ յանկարծ մեր իմացականութիւնը կորսնցնելով՝ կատաղութեան մէջ կ'իյնանք»:

Երէցը խորապէս յուզուած մտիկ կ'ընէր: Շատ տառապող անհատներու հանդիպած էր, սակայն այս օրիորդին տապնապը կը գերազան-ցէր ամէնը: Գիտակցաբար հետզհետէ ասանկ տառապանքի մը մօտենալու ամենօրեայ յօշո-տիչ մղձաւանջն հենկնալ աչքին առջեւ...

Երէցին սովորութիւնն էր այսպիսի պարա-գաներու պահ մը լուռ մնալ եւ իր վարդապե-տէն խորհուրդ հարցնել: Սակայն դեռատի օրի-որդը աչքերը անոր ուղղած պատասխանի մը կ'սպասէր, արդեօք երէցը զինք կը նախատէր:

«Ձեր ճամբան ծանր է», ըսաւ ան վերջա-պէս շեշտով մը, որմէ յայտնի էր թէ խօսելու դժուարութիւն կ'զգար, «սակայն Դուք քաջա-բար պիտի քաշէք անոր վրայէն եւ վախճանը լոյս պիտի ըլլայ. մինչդեռ ծովուն ճամբան խա-ւարի կ'առաջնորդէ: Մեզմէ եւ ոչ մէկին ներքի է անձնատապան ըլլալ: Քանզի Աստուած հաւա-տարիմ է, ու որչափ որ մեր ճամբան դժուարա-նայ, այնքան աւելի պիտի կը բռնէ Ան մեր ձեռ-քէն»:

«Ձեր խօսքը մխիթարական կը հնչէ ական-ջիս, բայց երբ ես, որ բոլորովին մինակ մնա-ցած եմ, այնպիսի վիճակի մը մատնուիմ որ բը-

նաւ չկրնամ օգնել ինքզինքիս», . .

«Դո՛ւք Ձեզ հոգացիք երբոր գեռ մանուկ էիք», ընդմիջեց ծերունի երէցը ժպտելով, «եւ կը տեսնեմ թէ տակաւին կ'ապրիք» :

«Մայրս կանուխ մեռաւ, սակայն մեր զրացի կիներէն մէկուն սրտին մէջ մայրական սիրտը նշույլ մը արթնցած էր օտար մանուկի մը հանդէպ, եւ այսպէս անիկա խնամեց զիս» :

«Ան որ այդ ճամբան բացաւ Ձեր մանկութեան մէջ, ապագային ալ պիտի հոգայ Ձեզ, ամէն անգամ որ ինքզինքնիդ անօգնական զգաք» :

Օրիորդը լռեց : Երբոր երէցը մեկնելու վերայ էր՝ «Անշուշտ նորէն պիտի գաք», ըսաւ յուսադրուած :

Ժամանակէ մը վերջ երբ երէցը կրկին անոր այցելութեան եկաւ, անիկա ըսաւ. «Շունս տըխրութեամբ ինծի նայելու պէտք չունի այլեւս, անգամ մըն ալ կեանքս աչքէ անցուցի եւ Աստուծոյ օգնութեան զարմանալի նշանները գտայ անոր մէջ : Ձեր խօսքերը ճշմարիտ էին : Պիտի ջանամ վստահիլ Անոր : Սակայն կէտ մը կայ որ չեմ կրնար հասկնալ : Ես կ'ուզէի իմ ընկեր արարածներուն օգտակար ըլլալ, ուրեմն ձեւել, կարել սորվեցայ անոնց ծառայելու համար, բայց զլիսուս ցաւը չթողուց : Որբեր խնամել փորձեցի, այդ ալ կարելի չեղաւ : Արդեօք ինչո՞ւ Աստուած գործելու յօժարութիւն ունեցող անհատի մը ձեռքէն կ'առնէ հաւատարմաբար ծառայելու ամէն կարելիութիւն : Ինչո՞ւ իմ մէջս գտնուած այս խելագարելու երկիւղը կեանքիս աւերման պատճառ պիտի ըլլայ» :

«Այդ հարցումները թող մնան մինչեւ որ Ձեր երկնաւոր Հօրը քով հասնիք : Ես միայն խեղճ արարած մըն եմ եւ թերեւս սխալ պատասխան մը տամ, բայց երբոր Տէրո՛ջը առջեւ կայնիք, Անիկա Ձեր կեանքի բոլոր հարցումներուն պիտի պատասխանէ, եւ Ձեր կեանքը պիտի տեսնէք պայծառ լոյսի մը մէջ» :

«Երբոր քովս կը գտնուիք, ամէն բան զիւրին կ'երեւնայ, սակայն երբ առանձին եմ, անգործ մնալ՝ եւ ահուելի ճակատագրիս սպասել, սոսկալի կը թուի ինծի» :

«Ինչո՞ւ անգործ սպասել, ատիկա ո՞վ կը պահանջէ Ձեզմէ» :

«Բայց կարողութիւն չունիմ գործելու. ամբողջ ըրածս աղէկ դէշ, տանս զործերուն հետեւիլ է» :

«Այդ բաւական է, միայն թէ ատոր հետ միասին հետեւեցէք քրիստոնէին ամենէն պատուական գործին՝ որ աղօթքն է» :

Օրիորդին աչքերուն մէջ յուսոյ նշույլ մը ծագեցաւ : «Աղօթեմ որ Տէրը այս ահուելի ճակատագիրս ինծմէ դարձնէ», հարցուց :

«Աղօթեցէք, եւ մի՛ մոռնաք երբէք թէ Տէրը ո՛չ փոթորիկին, ո՛չ կրակին եւ ո՛չ ալ երկրաշարժին մէջ էր, այլ մեզմ ու բարակ ձայնին մէջ» :

Հովիւը մեկնեցաւ :

Իրիկուն էր : Պայծառ վերջալոյսը կամաց կամաց կ'անհետանար ծովուն վրայէն եւ անխուսափելի խաւարին տեղի կուտար : «Հիմա գիտեմ թէ ի՞նչ պիտի խնդրեմ Աստուծմէ» խորհեցաւ օրիորդը ինքնիրեն. պիտի խնդրեմ Անկէ որ իմացականութիւնս չկորսնցնեմ եւ հիւանդութիւնս այն աստիճանի մեղմացուի, որ ուրիշին վնասակար չըլլամ. անկէ վերջը Անոր կամքը թող ըլլայ» :

Տարիներ անցան : Օր չանցաւ որ օրիորդը բոլորովին առողջ կամ աներկիւղ զգար, սակայն հանդարտօրէն իր առօրեայ գործին կը հետեւէր :

Փոթորկալից իրիկուն մը՝ երբոր ծովը ալեկոծութեան մէջ կը գտնուէր, երէցը ծովագերք գնաց տեսնելու թէ արդեօք ծովուն վրայ օգնութեան կարօտ նաւեր կը գտնուէին : Ամբողջ զիւղը ծովագերք հաւաքուած էր : Մէյ մըն ալ երէցը տեսաւ որ մոլթ բան մը իրեն կը մօտենար եւ քիչ վերջը զգաց որ քովը կեցած իր հագուստէն կը քաշէր : Օրիորդին շունն էր որ այժմ բարձրաձայն հաչելով բան մը ըսել կ'ուզէր : Ծերունի երէցը խռովալ մտքով օրիորդին տան ճամբան ձեռք առաւ . . . :

Բազմոցին վրայ պառկած էր օրիորդը զուստ եւ խաղաղ : Երէցը ծոցեալ եւ ախանջը դրաւ անոր սրտին : Սիրաբ բաբախելէ զաղրած էր, սակայն նրա գէմքէն անասման խաղաղութիւն մը կ'արտացոլար :

Արդեօք ի՞նչպէս մեռած էր. ե՞րբ մեռած էր :

Երբ երէցը այս խորհուրդներով սենեակին մէջ բոլորաբար կը նայէր, կտոր մը թուղթ երեւցաւ անոր աչքին : Ձեռքը առաւ զայն, եւ հասկեցաւ որ զողորջուն մատնելով գրուած էին հետեւեալ տողերը. «Կը գգամ թէ հետզհետէ գործութիւնս ինծմէ կ'երթայ. ինծի կը թուի թէ Աստուած խաղաղութեամբ կը տանի զիս Իրեն քով, ուր ամէն բան պիտի կրնամ հարցնել Իրեն : Բայց արդէն գիտեմ թէ ի՞նչ պիտի պատասխանէ ինծի, երբոր հարցնեմ Իրեն իմ կեանքիս երկիւղին մասին : Ինծի պիտի ըսէ թէ իմ այդ երկիւղս այն թելն էր որ զիս Իրեն հետ աւելի սերտօրէն կը կապէր. եւ ես զոհութիւն պիտի տամ Անոր — Գոհութիւն» :

Բժեշկը անոր մահուան պատճառը հասկնալու համար ուզեց իսկական անդամազննութեան մը անցնել զիակը : Մայրաքաղաքէն բերել տըռաւ ընկեր բժիշկ մը անոր հետ միասին քննե-

լու: Երկու բժիշկները երբ գլուխը կը բանային, խսկական առեղծուածի մը առջեւ կը գտնուէին: Ուղեղին ծալքերը անանկ երեւոյթ մը առած էին, որուն հետեւանքը կատարեալ խելագարութիւն եւ կատաղութիւն ըլլալու էր, մինչդեռ այս երիտասարդ կեանքը հետզհետէ իր զօրութեան նուագիլը զգալով հանդերձ, առանց իմացակա- նութիւնը կորսնցնելու՝ խաղաղութեամբ իր վախճանին հասած էր:

Թրգմ. Գերմաներէնէ

Ն. Մ.

Տ Ո Ւ Ր Ի Ն Ձ Տ Է Ր

Տուր ինձ Յիսուս լոյսէդ փայլուն,
Մութ աշխարհի քալեմ ճամբէս
Քայլերս ուղղեմ շեշտակի Քեզ,
Հասնիմ չքնաղ վայրն շողշողուն:

Տուր ինձ Փրկիչ սիրոյ ծովէն,
Ամայութիւնն սրտիս օծեմ
Փառքն Յիսուսի ընդ միշտ երգեմ,
Մինչեւ անցնիմ այս մութ ձորէն:

Տուր ինձ Տէր իմ շնորհք անհուն,
Շրթունքներս օծուին անով,
Ու սէրդ պատմեմ մեծ հրճուանքով
Մինչեւ տեսնեմ դէմքըդ սիրուն:

Սրսկէ Խաչեալ արիւնդ կարմիր,
Հոգւոյս խորանն անով մաքրեմ,
Ապրիմ կեանք մը սուրբ ու վսեմ,
Յոյալ կեանքէս կեանքդ անբասիր:

Զնջէ ինձմէ մեղքի բիծեր,
Որոնք լոկ սիրտս կը խոցոտեն
Հպիր կեանքիս ամէն ատեն,
Որ աւելի սուրբ ըլլամ Տէր:

Պատիւ, հրճուանք, փուճ աշխարհ սին,
Փառք ու հաճոյք, ալ են ոչինչ
Միայն Յիսուսս է ամէն ինչ,
Անորն է իմ սիրտն ու հոգին:

Մարտիկա, 20 Յուլիս 1926

ՄԱՐԻԱՄ Թ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա Ձ Ը Գ Մ Է Ք Թ Ո Ւ Պ

Պու սէնէ Հալէպտէ միութիւնտէ հազար պու- լունան Պատուելիլէրտէն պիւրի, միւսինլէրէ մախ- սուս օլան պիր ճէմիլէթտէ սէօլլէմէք իչիւն տա- վէթ օլունտու. Դորն. 3 պապ օգուտու ընարան օլ- մագ իւզրէ Նհ 6. 3 այէթի ալմը իտի. «Պէն

պէօյիւք պիր իշ իֆրասընտա իմ» հազարնտա սէօլլէր իքէն, սուալ էթտի Բապպըն պէլթի խա- րապ օլմուշ, զալմը էսարէթէ կէօթիւրիւմիւշ իքէն, սէնին տէ զալպինտէ Նհհմիա կիպի, հիւզն, վազֆիլթի վէ ֆիտաքեարըզ վար մը: Պու քէլամըն գուվէթիլլէ զապթ օլունտու, վէ քիլլիւ եէնի վազֆիլթիլլէ իլէ Բապպա թէսլիմ օլ- աու. վէ շու քէլամլար իլէ Բապպ պանա նուր վէրմէյէ պաշլատը. անլէրի մուխթասարճա պէ- յան էթմէք իսթէրիմ: 1 Պետ. 2: 1-10 պու բուհա- նի պէլթին թէմէլ թաշը վէ քէօշէ թաշը Յիսուս Բրիստոս տըր, 1 Դօրն. 3. 11, Պետ. 2: 6: Սալպ օ- լունմուշ օլան Յիսուս Բրիստոս, Անը տիւնեա թանըմատը, քէնտինքիլէր զապուլ էթմէտի. լաքին օնու զապուլ էտէնլէր Եուհ. 1: 12, 13 էվ- լատ Ուլլահ տըրլար: Անլէրին թէվէլլիւտիւ հօ- զարըտան, Ալլահտան, Բուհտան: Անճազ սալպ օլունանա պագմագ իլէ, Եուհ. 5: 1-16. պու տիրի իման տըր քի եէնի հայաթ վէրիյօր: Իշթէ պու իլահի ֆամիլիայա տախիլ օլմանըն անճազ հօ- լու պու տըր: Պու ֆամիլիանըն արզասը նէ տիր. Մարկ. 3: 33: Սէմավի Փէտէրին իրատէթինի իճ- րա էթմէք տիր: 2իւն օնա եէնի հայաթ վէրէն վէ խալզ էտէն Խաչեալ Փրկիչին սըֆէթի մախ- սուսէսի օ տըր. Իպր. 10: 5-10: Ահ նէ օլալտը պու պապտա պիլտիլթի պիլտիլէ իտիմ. Յիսուս Բրիստոս ինսանի ազլընա, արզուտունա կէօրէ հիշ պիր շէյ էթմէտի, պիր թէք ատըմ աթմա- տը. Փէտէրին իրատէթինէ կէօրէ օլմայարագ պիր թէք սէօզ սէօլլէմէտի. Եուհ. 8: 28, 29: Պու- նու տէրին տիւշիւնէլիմ: Օ աշըլմըզ գուլագ իլէ, քիթապըն թուամարընտա հազարնտա հազըլմըզ օլան Փէտէրին իրատէթինի, տինկլէյէրէք անկ- լատը քի գուրպան վէթագտիմէ հալինտէ քէն- տինի, Չաթընը, ճէսէտինի վէրմէլի. Իպր. 9: 14, 26: Շիմտի աշըզ անկլայօրուզ քի, Յիսուս Բրիս- տոս խաշընա տէյիլ անճազ կիւնահլարըմըզ կէօթիւրտիւ (պու թէպտիրիմիդ տիր) հէմ տա- խի պիզի, քէնտիմիզի, կիւնահլը թէնիմիզի կէօ- թիւրտիւ պու թագտիսիմիզ տիր, խաչ հիւքմ, լանէթ վէ էօլիւմ եէրի տիր, օրատա էսքի խըլ- գաթ (քէօթիւ վէ էի) նիհայէթէ կէլտի. էսքիլի զալտըրըր, քի եէնիլի սապիթ իտէ. էսկի իպա- տէթ ուսուլլարը, իէսմի վէ խարիճի տին զէվալ պուլտու. էսքի ատէմիմիզ իպթալ օլտու. իշթէ օղուլլար հալինտէ խալզ օլունմամըզ, պու էսքի- նին էօլիւմէ վէրիլմէսիլլէ անճազ միւմին օլու- յօր, անճազ սալպ օլունմուշ Օլանը, վէ Օնուն խաշընըն քէլամընըն թամ մանասընը անկա- մագ, վէ Օնա իթաաթ էթմէքլէ, պու իլահի ֆա- միլիայա էվլատլար հալենտէ տօղույօրուզ, վէ Անտէ պէսլէնիպ պէօլիւյօրուզ. իշթէ պու քէլամ թէօքէզ թաշը վէ սիւրչմէ գալասը օլույօր: Եէ-

հուտիլէր թէօքէգիտի, սէպէպի Րօմ. 9: 31-33 տէ
 եազըւմը. Գրիստոս անլէրէ սալթանաթլը պիւր
 հիւքմտար հալինտէ տէլիլ, անճազ պիւր զուլ սու-
 րէթինտէ կէլտիլի իչիւն, զապուլ էթմէլիպ սալպ
 էթտիլէր. Անըն իւզէրինէ տիւշտիւլէր. Մատթ. 21: 44: Պօղոս սալպ օլունմուշ Յիսուս Գրիստոսը
 օլան իմանլէ խէլասը վազ էթտիլինտէ. Եէհու-
 տիլէր անը զաթլ էթմէտիքէ, եէլիպ իչմէք տէ-
 րէճէսինտէ, զապի իրատէթլէ զարշը տուրտու-
 ւար. չիւն անլէր շէրիաթըն զարէթինի չէթիօր-
 վար իտի: վէ շէրիաթըն իճրասը իլէ սալիհ օլ-
 մազը թազիպ էտիօրլար իտի: Խաչըն քէլամը
 ինսանըն գալպինտէ Ալլահա զարշը օլան պուզդ
 վէ ատալէթի աշիքեարէ չըզարլօր իտի. իթա-
 տթ էտիպ պինա օլունանլար, եանի շիֆա պու-
 ւանլար, (չիւն պինա օլունմազ շիֆա պուլմազ
 աէմէք տիւր) վէ իթաաթսըզլըզ իլէ սիւրչիւպ
 տիւշէնլէրի, թային վէ թէֆրիյդ էտէն քէլամ,
 սալպ օլունմուշ Յիսուս Գրիստոս տըր: Եուհ. 6
 պապտաքի թալիմ իտի քի շայիրտլիյի իմթի-
 հան էթտի. Եուհ. 6. 60-69: Իմտի Ալլահ իլէ սուլհ
 օլմազ, վէ պիւր ճէսէտտէ պինա օլմազ իչիւն,
 անճազ պիւր եէր վար, էֆ. 2: 14-18 տէ օնու պու-
 լուրուզ, Յիսուս Գրիստոս խաչը վէ զանըլա
 սուհու սէլամէթ կէթիւրտի: չէմ ինսան իլէ Ալ-
 ւահ արասընտա, հէմ ինսան իլէ ինսան արա-
 սընտա (հաթթա միւմին իլէ միւմին արասընտա)
 Յիսուս Գրիստոս, կիւնահ վէ խաթալարտա էօլ-
 միւշ, մէլուն օլմուշ պէշէրիյէթին պիւր ազասը
 հալինտէ, մէլուն խաչտա եէրինի ալտը, վէ Եէ-
 հուտի իլէ թաիֆէ արասընտա օլան շու ատա-
 վէթ տիվարընը երզտը, եանի իչինտէ չօզ հի-
 զամլարը օլան էմրլէրին շէրիաթընը, պունուլպ
 կէօսթէրտի քի, թէնտէ օլան պիւր թաիֆէ զա-
 տար (զաթիլ, զինաքեար, հարամի) խիթանլը
 օլան պիւր Եէհուտի, ինտ Ալլահ մէքրուհ, մէլուն
 պիւր կիւնահքեար տըր քի անճազ Յիսուսուն զա-
 նընա օլան իմանլէ փաքլէնիպ թազտիս օլունա-
 պիլիւր. պէօլլէճէ հէր իքիսի պիւր բուհտա, եանի
 Գրիստոստա օլան բուհ իլէ, Ալլահա եազլաշա-
 պիլիւր, վէ Պիւր Ֆէսէտ օլմազ իւզրէ պինա
 օլունուր: Պու Փամիլիայա վէրիլէն իսմ «էմվաթ»
 տան զըլամ էտէնլէր», Գօլ. 1. 18, վահ. 1. 5: Յի-
 Գրիստոս իլք տօղանը տըր: Անլէր Ալլահա մազ-
 պուլ օլան բուհանի զէպիհէլէրի թազտիմ էթ-
 միշ պիւր մուգատտէս քեահինլիք տիւրլէր, 1 Պետ. 2: 5, 9: Մէլէքլէր վէ քեահինլէր տիւրլէր վահ. 1: 6
 Ալլահա այրըւմը պիւր զավմ, պիւր մազսէտ
 իւչիւն եանի Անըն Փազիլէթլէրինի, քէմալի-
 յէթլէրինի, պիւր վիւքէլա էլլիսի հալինտէ Ալա-
 լըզընը իւան էթմէք իչիւն: Անտէ հիչ պիւր ին-
 սանի իշ վէ իթթիլար եօզ, անճազ ինայէթ վէ
 մէրհամէթէ նաիլ օլմուշ:

Իմտի պու պէլթ պիթմէզտէն, վէ Օնուն
 Բապպը կէլիպ ճէլալինէ կէօթիւրմէքտէն, Բապպ
 Իշա 55: 6-11 քէլամլարը իլէ տալէթ վէրիօր,
 սիզին էֆքեար վէ եօլլարընըզտան տէօնին, կէ-
 լին, ալըն, փէտէր խանէսինտէ տահա եէր վար.
 հէր թէտարիքեաթ հազըրլանմը տըր, զափու
 աչըզ, Փէտէր իպրամ էտէր: Տէօն, էլ միւսրիֆ
 էվլատ, վէ էվէ կէլ:

Ամալ. 20: 32, 26. 18: Սիզի Ալլահա, վէ Անըն
 ինայէթլինին քէլամընա սմարլարըմ, օլ քի սիզի
 պինա էթմէյէ վէ ճիւմլէ մուգատտէսլէր իլէ պէ-
 րապէր սիզէ միւրաս վէրմէյէ զատիւր տիւր:

Մայիս 10, Հալէպ

ՆՈՒՐԻՅԱ ԼԵՒՈՆԵԱՆ

ԱԼԼԱՀԱ ՄԵՐՊՈՒԹԻՅԷԹ

Եա Բապպ թէսլիմ ինսանա պէն
 Եօզ տըր դայրի քիմսէմ սէնտէն
 Ալլահին Փանի սէֆասը
 Այրըմասըն պէնի սէնտէն:

Եա սէմանըն փաք զուզուսու
 էքիւլ թէնին պէտ արզուսու
 Իմանսըզլըզըն զայդուսու
 Այրըմասըն պէնի սէնտէն:

Պու տիւնեանըն շէրէֆ շանը,
 Սէրվէթ, սաման վէ էմվալը,
 Պօզուզ ֆիքրին պէտ խայալը
 Այրըմասըն պէնի սէնտէն:

Իզլալ էտէն Փանի շէհվէթ
 Ղայրի սախթէ պիւր մուհապպէթ
 Եա տա եանլը պիւր տէլալէթ
 Այրըմասըն պէնի սէնտէն:

Մուհապպէթին զավի պէնտի
 Բապթ էլլէսին սանա պէնի
 Քի պու էօմրիւն խապֆ տէհշէթի
 Այրըմասըն պէնի սէնտէն:

Գահթ եա զըթալ հիչ պիւր գուվվէթ
 Գաթ էթմէսին պու մուհապպէթ,
 Եա Բապպ պէնի սէնտէ հըֆզ էթ
 Շիմտի տաիմ իլ էլ էպէտ:

Հալէպ

*



ԱՍՏՈՒԱԾ ԱՂՕԹՔՆԵՐՈՒ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ՞

Տօքթոր Պիէրսօն կը պատմէ.— Մը. Միւլէրի մահուընէն քիչ առաջ հարցուցի իրեն թէ արդեօք պատահած էր որ իր Աստուծոյ ըրած մէկ խնդրանքը անպատասխանե մնացած ըլլար։ Անիկա իր սովորական ճշդութեամբ պատասխանեց ինձ թէ ինք 62 տարի, 3 ամիս, 5 օր եւ 2 ժամ աղօթած էր երկու մարդոց ապաշխարութեան համար՝ եւ անոնց տակաւին զղջումի սեւէ նշան ցոյց չէին տուած։

«Կը մտածէ՞ք թէ Աստուած զանոնք դարձի պիտի բերէ»։

— Վստահարար։ Կը կարծէ՞ք թէ Աստուած իր մէկ զաւակին վրայ երկու հոգիներու բեռը պիտի գնէր, եւ ան ալ ամբողջ 62 տարի, եթէ չէր ուզեր ի վերջոյ զանոնք փրկել։ Վստահարար ես անոնց պիտի հանդիպիմ երկինքի մէջ...

Բիշ յետոյ Մը. Միւլէր մեռաւ։ Օր մը Պրիստօլի մէջ իր բեմէն քարոզած պահուս՝ իր հետ ունեցած վերոյիշեալ խօսակցութիւնն մէջ բերի։ Պաշտամունքէն ելլելուս կին մը մօտեցաւ ինձ։ «Այդ երկու մարդոցմէ մին իմ հօրեղբայրս էր», ըսաւ ան, «անիկա ապաշխարեց, եւ քանի մը շաբաթ առաջ մեռաւ Տէրոջը խաղաղութեան մէջ»։

Անկից յետոյ լսեցի թէ միւսն ալ իր Փրկիչը գտած էր։

Թրգմ. «En Avant» էն

ՄԱՆԿԱՆՑ ՄԻՒՆԱԿ

ԻՆՉՈ՞Ւ ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ ՕՐԸ

Բժիշկի մը տիկինը հետեւեալը կը պատմէ։ Աւագ Ուրբաթ օր մըն էր։ Ամուսինս եւ ես կը պատրաստուէինք եկեղեցի երթալու։ Մէյ մըն ալ պարոն մը պզտիկ, կապոյտ աչքերով աղջկան մը ձեռքէն բռնած ներս մտաւ։ Փոքրիկին հայրը ուզեց որ գործողութիւն մը կատարուի անոր երեսին վրայ որ ժամանակէ մը ի վեր ունեցած էր։

«Սակայն ինչո՞ւ տօնի օր մը կուգաք երբ ամէն մարդու իրաւունքն է երթալ քարոզ մը լսել», հարցուց բժիշկը, որ ընդհանրապէս ոչ ժամանակին ուշը եւ ոչ ալ տեղի մը հեռաւորութիւնը կը փնտռէր, երբոր հիւանդի մը օգնելու պատեհութիւնը ներկայանար։

«Պատմեմ թէ ինչո՞ւ այսօր եկանք», ըսաւ փոքրիկին հայրը։ Ամիսներ առաջ այս մեր

պզտիկ աղջկան երեսին վրայ գործողութիւն մը կատարուելու էր, սակայն ամէն անգամ որ գործողութեան մը խօսքը կ'ընէինք, փոքրիկը այնքան սաստկօրէն կուլար ու կը զողար որ կ'ստիպուէինք ամիսէ ամիս յետաձգել։ Այս առաւօտ երբոր հագիւ լուսցած էր, պզտիկ մահիճէն ելաւ, իր փոքրիկ բազուկներով մօրը փաթթուեցաւ եւ անոր ականջին փսփսաց, «Մայրիկ, ես այսօր հայրիկիս հետ բժիշկին պիտի երթամ որ իմ երեսիս վրայի ունեցքը վերցնէ»։ Անշուշտ փոքրիկին այս քաջ տրամադրութիւնը շահագործել պէտք էր, ուստի զինքը անմիջապէս Ձեզի բերի, որ գործողութիւնը կատարէք»։

Բժիշկը պզտիկին նայեցաւ. այդ սիրուն անուշիկ աղջկան կապոյտ ջինջ աչքերուն մէջէն կարծես երկինքը կ'արտացոլար։ «Բու փափաքդ սիրով պիտի կատարեմ, փոքրիկս, եւ իմ պզտիկ հիւանդիս հետ կարելի եղածին չափ փափկութեամբ պիտի վերաբերիմ, բայց պիտի ստիպուիմ քիչ մը ցաւ պատճառել», ըսաւ բժիշկը։

Փոքրիկը հանդարտօրէն բժիշկին երեսը նայեցաւ եւ իր գլուխով հաւանութիւն ցոյց տուաւ։

Գործողութիւնը շատ երկար տեւեց եւ շատ ալ ցաւ պատճառեց, սակայն պզտիկը ո'չ հառաչեց, ո'չ լացաւ եւ ո'չ ալ շարժեցաւ։ Անշարժ մնաց հայրիկին գիրկը մինչ բժիշկին զանակը աւելի ու աւելի խորունկ կը մտնէր իր փափուկ երեսի մասին մէջ։

Գործողութիւնը վերջապէս յաջողութեամբ լրացաւ։ Պզտիկը քիչ մը հանգստանալէ վերջ անոր հարցուցին թէ ո՞վ իրեն զօրութիւն տուաւ այդչափ ցաւ կրելու առանց ձայն մը հանելու։ Եւ անա փոքրիկը իր անուշիկ բերանը բանալով հետեւեալ մեղմ պատասխանը կուտար. «Որովհետեւ սիրելի Յիսուս Փրկիչը ինձի համար այսօր խաչին վրայ արիւն թափեց, Անոր չարչարանքը ինձի ալ զօրութիւն կուտայ քիչ մը չարչարանք կրելու»։

Բժիշկը չկրցաւ պատասխան մը տալ։ Անոր աչքերը արտասուքի կաթիլներով լեցուեցան եւ յուզուած՝ գիրկը առաւ փոքրիկը եւ համբուրեց զայն։ Պզտիկին բերնէն ելած այս մէկ խօսքը ամենէն եռանդուն քարոզէն աւելի ճարտասանօրէն կը խօսէր իր սրտին։

Թրգմ. Գերմաներէնէ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հետևեալ նամակը Մարտիկոյ Հայ Աւետ. եկեղեցւոյ ուղղութեամբ է, կարգ մը շափեկան տեղեկութիւններ պարունակելուն համար կը հրատարակենք, տեղեկ պահելու մեր ընթերցողները Հալէպի հոգեւոր գործին այն մասերուն վրայ, որոնց մասին դեռ գրած չէինք :

Յարգաւմեծար եղբայր ի Տէր,

Տք. Պէրօնի եւ Տք. Կօմշէմի այցելութիւնը մեզի համար մեծ օրհնութեան, մխիթարութեան եւ ուրախութեան պատճառ մը եղաւ : Կը մաղթենք որ Տէրն ալ աւելի օրհնէ այդ սիրելի եղբայրները, անոնց ընկերութիւնը եւ անոնց նպատած եկեղեցիները : Տք. Պէրօնի ձեռամբ 4 օսմ. ոսկիի նուէր մը ընդունեցինք ձեր եկեղեցիէն : Քէմրի եկեղեցւոյ ժողովուրդին կողմանէ կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը : Տէրն օրհնէ ձեզ իր առատ շնորհքովք. այս է մեր ջերմ մաղթանքը. նաեւ սիրալիկ բարեւներ ամենուի :

Մեր եկեղեցին ունի երկու ջանասիրաց ընկերութիւններ. երիտասարդաց եւ պատանեաց ընկերութիւնը ունի 120 էն աւելի անդամներ, եւ երիտասարդութեաց ընկերութիւնը ունի 95 անդամներ. երկուքն ալ գործնական փէճակի մէջ են. անոնց միւր կը շատնայ օրէ օր : Կը խնդրենք Տէրոջմէ որ այս ընկերութիւնները օրհնութեան պատճառ մ'ըլլան սամրոջ քէմրի հայ ժողովուրդին համար : Երկու ընկերութիւններն ալ ունին մէյմէկ պզտիկ գրադարաններ :

Մեր եկեղեցւոյ յատուկ ունինք կիրակնօրեայ դպրոց մը, որ կը բաղկանայ 12 բաժնիներէ եւ ընդամենը 300 էն աւելի երկսեռ մանուկներէ, եւ կը կառավարուի 10 վարժուիչներէ եւ երկու վարժապետներէ : Չունինք բաւական սենեակներ. մեր տեղը իրիստ նեղ ըլլալուն համար շատ անգամ կ'ստիպուինք վեց տարեկանէն վար եղող մանուկները վերադարձնել իրենց տունը :

Քաղաքի Աւետ. եկեղեցին ալ ունի երիտասարդաց եւ երիտասարդութեաց յատուկ ջանասիրաց ընկերութիւններ, որոնք կիրակի օրերը մամուստը պաշտօններ կ'ունենան, ունին նաեւ գրադարաններ :

Արքայապետ եղբայր Սէֆէրեանի տրամադրութեան ներքեւ կը գտնուի ժողով մը որ կը բաղկանայ 600 անդամներէ. անոնցմէ 330 ը հաստատ քրիստոնեաներ են, որոնք իրենց քրիս. վկայութիւնները տուած են : Ունին իրենց յատուկ Պատանեաց ընկերութիւն մը որ կը բաղկանայ 27 ապաշխարած երիտասարդներէ. ունին աղջկանց ընկերութիւն մը որ կը բաղկանայ 55 քրիս. աղջիկներէ : Կիրակներէն զատ շաբթուան մէջն ալ ունին աղօթածուղովներ :

Ընդհանուր առմամբ հոգեւոր գործը բաւական գոհացուցիչ է Հալէպի մէջ : Աղօթեցէք մեզի համար եւ մենք ձեզի համար :

Քէմրի' Հայ Աւետ. եկեղեցւոյ Կողմանէ

Հալէպ. 4. 8. 26. ՅՈՎՀ. Յ. ՀԱՅՏՈՍԹԵԱՆ

.....

Բանբերի Մահճակալը. Բանբերի մահճակալին հաւաքիչներուն եւ նուիրատուներուն կ'ողբենք ծանուցանել որ իրենց զրկած նուէրներուն միջոցաւ արդէն Յուլիս 1 էն սկսեալ հաստատեցինք Բանբեր Մահճակալը Հալէպի Բեթեղա հիւանդանոցին մէջ : Յառաջի-

մային կը յուսանք աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալ : Որքան ատեն որ մահճակալի տոմսերը դեռ հիւանդին օրական ծախքը չեն կրնար հասնել, Action chretienne en Orient պիտի տայ պակասած մասը, բայց յոյս ունինք թէ շուտով պիտի կրնանք այնքան սոսկալներ ցրուել որ սոյն ծախքը բոլորովին մենք վերցնենք :

Այս պատեհութեամբ մեր յատուկ շնորհակալութիւնները կը յայտնենք արտասահմանէն եկած համակրական արտայայտութեանց համար :

Ամերիկայի մէջ Բանբերի Ամերիկեան Մահճակալին ծախքը հոգալու գործը կամաւորապէս ստանձնած է մեր յարգելի ուսուցչապետներէն Բրօք. Կ. Մուսեղեան. անոնք որ սոյն խնդրով կը հետաքրքրուին, թող հաճին ուղղակի իր հասցէին դիմել, որմէ պիտի ընդունին ամէն տեսակ մանրամասնութիւն Բանբերի մահճակալի, անոր տոմսերուն եւ ամսական ծախքի մասին :

Բրօքեւսթրին հասցէն է Prof. G. Mooseghian, 83 Beach Street, Waverly Mass. U. S. A.

Մեր Բաժանորդներուն. Բանբերի այս թղթին յապաղման համար եւս ներողամտութիւն կը խնդրենք, որքան ատեն որ մենք մեր անձնական տպարանը չունինք եւ ստիպուած ենք գործերը տպարանի գործերուն յարմար ցնել :

Այս թուով Թերմա իր Բ. տարւան կիսաշրջանը կը լրացնէ : Բաժանորդներէն պիտի խնդրէինք որ մինչեւ հիմա մոռցուած բաժնեգինները զրկուին :

Յրանսարնակներու դիւրութիւն տալու համար Մանտա փոսթ հաստատած ենք : Բոլոր դրամ զրկել ուզողները իրենց տեղին նամակատունը երթալով կարծիր գոյն մանտա փոսթ մը կ'առնեն եւ վրան կը նշանակեն իրենց զրկելիք գումարը եւ մեր փոսթ չէքին թիւը որ է C. c. 182.53 Marseille, Hovhannes Ghazarossian, 29, Rue Fauchier. Այս կերպը կարգադրած ենք, մեր բաժանորդներուն դիւրութիւն մը տալու եւ դրամներու ապահովութեան համար : Պիտի խնդրէինք սակայն իւրաքանչիւր մանտա փոսթի ետեւը գրել թէ ի՞նչ նպատակի համար կը զրկուի դրամը :

.....

Մեր քովը պատրաստ կան.

Ս. իրքեր հայերէն լեզուով ամէն մեծութեամբ հասարակ եւ ոսկեզօծ.

Ս. Գրքեր հայատառ Թուրքերէն ամէն գրութեամբ. Հոգեւոր երգարան, ձայնագրութեամբ Կ. գրպանի հասարակ եւ ոսկեզօծ.

Քրիստոնեայի ճամբորդութիւնը, հայերէն եւ հայատառ Թուրքերէն.

Ս. գրոց Բառարան.

Ս. գրոց Աշակերտին գիրքը.

Նոր Կտակարանի մեկնութիւն.

Կան նաեւ ամէն տեսակ հոգեւոր գրքեր, օր. Տիտոս, երէց Հռիփ կենսագրութիւնը, Խաչ տամուղ, Մտածութիւնք տօնական օրերու, վերջապէս հոգեւոր կեանք մշակող ռեւէ գիրք ձեռք անցնել փափաքողներուն պատրաստ ենք օգնել :

ՅԻՍՈՒՍ ԿՈՒԳՍՑ գիրքը ունենալ փափաքողներ դիմելու են Խմբագրութիւն Մարանանայի, B. P. 303. Alep Syrie.

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար, Երեւան, 40, Րիւ. տէ Տօմինիքէն, Մարտի